ԿԵՍԱՐԱՑՈՒ «ՎԵՑՕՐԵԱՆ» ՇԻՐԱԿԱՑՈՒ ՏԻԵԶԵՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐ

Սույն հրապարակումը Բարսեղ Կեսարացու և Անանիա Շիրակացու երկերի աղբյուրագիտական ընդհանրությունը բացահայտող մեր պրպտած ոչ բոլոր ընդհանուր տեղիներն է ընդգրկում։ Ինչպես արդեն ցույց ենք տվել («Էրեբեր», 1971, № 3, էջ 99—107, 1975, № 1, էջ 55—72), հիշյալ ընդհանրությունները նշանակալի նպաստ են բերում թե՛ մատենագրության պատմության, թե՛ աղբյուրագիտական-տեքստաբանական այլևայլ հարցերի քննությանը։ Դրանք, ամենից առաջ, բացահայտում են Շիրակացու տիեզերագիտական տարբեր բացատրությունների սկզբնաղբյուրը, միաժամանակ հնարավորություն տալով վերանայելու նրանցում եղած երկբայելի մասերը, համապատասխան աղբյուրներով սրբագրելու աղավաղումները, օտարելու զանազան ճանապարհներով առաջացած խաթարում-անճշտությունները։ Հարկավ, այդ հատվածներով ճշտորոշվում են Կեսարացու աշխատության ազդեցության աստիճանն ու ընդգրկումը՝ նպաստելով գիտության պատմության հետ կապված որոշ հարցերի նորովի քննությանը։

Համադրաբար ներկայացվող նյութերից «Վեցօրեայի» բնագիրը քաղված է Վենետիկի 1830 թ. հրատարակությունից՝ հայերեն գրչագրերի, հունարեն բնագրի, վրացերեն և այլ թարգմանությունների անհրաժեշտ վերահսկմամբ։ Շիրակացու «Ցաղագս ծովուն», «Ցաղագս երկնային զարդուց», «Ցաղագս լուսնի», «Ցաղագս արեգական» աշխատություններից քաղված հատվածները տրվում են ըստ «Տիեզերագիտության և տոմարի» խորագիրը կրող հրատարակության (Երևան, 1940)։ Միաժամանակ ձեռքի տակ ունեցել ենք Շիրակացու թվարկված գործերի Ք. Պատկանյանի հրատարակությունը (Ս. Պետերբուրգ, 1877), անհրաժեշտության պարագայում հղելով այն։ Երկու մատենագիրների նշված գործերին վերաբերող մեր հրապարակած սրբագրություններն ենք միայն արտացելել տեքստերում, մնացած դեպքերում հրատարակությունները, նույնիսկ իրենց սրբագրելի մասերով, մնացել են չմիշատված։

Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՃԱՌՔ ՍՐԲՈՅ ԲԱՐՍՂԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿԵՍԱՐՈՅ ԿԱՊԱԴՈՎԿԱՑԻՈՅ ՅԱՂԱԳՍ ՎԵՑՕՐԵԱՅ ԱԻՈՒՐՑ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ

Վենետիկ, 1830

[75₁₀₋₂₂]... Զայս ասասցուք, եթէ ժողովք ջուրցն՝ որ կոչեցան ծովք, նորուն ծովու խորշք և գոգք են, որ են յամենայն կողմանս երկրի, և իւրաքանչիւր խորշքն ունին առանձին զկերպարանսն. և ըղնոյնսն կոչեաց աստուած ծովս։ Քանզի են իսկ այնպէս, եթէ ծովն հիւսիսոյ, եթէ հարաւոյ, եթէ ծովն արևելից և ծովն արևմտից. և անուանս ևս ունին իւրաքանչիւր գոգն

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՎ ՏՈՄԱՐ

Երևան, 1940

ՅԱՂԱԳՍ ԾՈՎՈՒ

[16₂₋₂₂] Եւ դարձեալ ասէ զժողովս ջուրցն կոչեաց ծովս. ահա յայտ է թէ որոշեալ սահմանօք եցոյց զխորշս գոգոցն, որ են յամենայն կողմանս երկրի. և ունին իւրաքանչիւր խորշքն առանձին կերպարանս, եթէ ծովն հարաւոյ, եթէ ծովն արևելից, եթէ ծովն հիւսիսոյ, եթէ ծովն արևմտից։ Եւ անուանս ևս ունին իւրաքանչիւր գոգք բազմամբ ծովուց։ Զի մինն անուանեալ կոչի Պոնտոս Եւ-

բազում ծովուց։ Զի մին անուանեալ կոչի Պոնդոս Եւքսինոս, և մեւսն Պրոպոնտինոս և Հելլեսպոնտիոս, և մեւսն Էգեոս և Ոնենինոս, և մեւս ծովն Սարգոնիկէ աշխարհի, և մեւսն Սիկիլիա աշխարհին. և միւսն Տիւրենոսի հանդերձ այլևս բազում անուամբք*, որ անցանեն ըստ թիւ և ըստ համար... [74₂₆-₃₅] Թէպէտ և աղի և դառն ճաշակս ունիցին, և աւազով սահմանեալք գտանիցին ըստ օրինակի կերպարանաց մեծին ծովու, սակայն չէ հնար՝ թէ ի կերպարանս մեծի ծովուն կայցեն, ոչ Ասփաղտիտէս ծովակ՝ որ մօտ է յաշխարհն Հրէաստանի, և ոչ Սերբոնիտէս** ծովակ՝ որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստինէ աշխարհի միջի***, և գայ հասանէ մինչև փ կողմանս արաբացւոց։ Զի սոքա՝ զորոց թուեցաք զանուանս, ծովակք են, և ոչ ծով...։ [75₁-₇] Թէպէտ և ասեն ոմանք զծովէն՝ որ անուանեալ կոչի Հիւրկանիայ, և զնորուն ընկերէն՝ որ անուանեալ կոչի Կասպից****, թէ զատեալք և մեկնեալք են սահմանօք, այլ որք փոյթ յանձին կալան ի գրի առնել զերկիր ամենայն՝ այսպէս ասացին, թէ ծակին ի միմեանս ծովքն, և երթան կցին ի միմեանս փ ներքոյ երկրի, և դէմք ամենեցուն ի կողմանս մեծի ծովուն հային։ [59₂₅-₃₉]... Քանզի կէսք այսպէս ասեն զծովէ, թէ վասն այնորիկ ոչ լնու ի գետոցն՝ որ մտանեն ի նա, և վասն այնորիկ է՝ ասեն՝ դառինք և աղի են ջուրքն ծովու, զի ըմպելի և յստակ ջուրքն քամին ելանեն ջերմութեամբն արեգական։ Քանզի ա-

* Հրատ.՝ դարձ բազում ևս այլ անուամբք փխ. և միւսն Տիւրենոսի հանդերձ այլևս բազում անուամբք, հուն.՝ καὶ Τυρρηνικὸν (Migne, հ. 29, էջ 88)։

** Հրատ.՝ Սերբոնիտիս, հուն.՝ Σερβωνίτις (էջ 88)։

*** Հրատ.՝ աշխարհ ի միջի։

**** Հրատ.՝ Կասպիտ, Շիրակացու հրատ.՝ Ասպիայ, Պատկ. հրատ.՝ Ասպիս, հուն.՝ Κασπίαν (էջ 88)։

քսինոս*. և միւսն Պրոպոնտիս և Հելլեսպոնտոս. և միւսն Եգէոս և Յոնէոս. և միւս ծովն Սարդոնիկէ աշխարհին. և միւս ծովն Սիկիլիայ աշխարհին. և միւսն Տիւրենոսի**, հանդերձ այլևս բազում անուամբք՝ որ անցանեն ըստ թիւ և ըստ համար... թէպէտ և աղի և զգառն ճաշակս ունիցին, և աւազոք սահմանեալ գտանիցին ըստ օրինակի կերպարանաց մեծի ծովուն, սակայն ոչ է մարթ զծովակսն ծովս կոչել։ Ո՛չ զԱսփաղտիտէս ծովակ*** որ մօտ յաշխարհն Հրէաստանի է. և ո՛չ զՍերբոնիտէս ծովակ որ է ընդ Եգիպտոս և ընդ Պաղեստինէ աշխարհի միջի. և գայ հասանէ ի կողմանս արաբացւոց։ Եւ ո՛չ մեր աշխարհիս ծովակ զոր կոչեմք Բզնունեաց, և ո՛չ այլքն որ յարևելս են նոյնանմանք։ Զի սոքա, զորս թուեցաքս, [17₁-₂₃] ծովակք են և ո՛չ ծովք։ Թէպէտ և ասեն ոմանք զծովէն որ անուանեալ կոչի Հիւրկանիա. և զնորուն ընկերէն****, որ անուանեալ կոչի Կասպից թէ զատեալ մեկնեալ են սահմանօք ի բուն ծովէն։ Այլ որ փոյթ անձին կալան ի գիր առնուլ զաշխարհ ամենայն, որպէս յառաջն ասացի, ասեն թէ ծակ ի միմեանս են ծովքն և երթան կցին յիրեարս ի ներքոյ երկրի, որպէս զի լինել ըստ աստուածային գրոց ժողով ջրոցն ծովու մի։ ...Այսպես ասեն չար փիլիսոփայքն թէ անդստին ի նմանէ ելանեն գետք և ակունք աղբերաց. և վասն այնորիկ ո՛չ լնուն. զի որպէս ելանեն, նոյնպէս և մտանեն։ Եւ վասն աղի և դառն համոյն ասեն՝ թէ վասնզի ո՛չ ելանէ ջուր ի վերայ երկրի որ պարզէ զմրրութիւն նորա և պղտորութիւն,

* Հրատ.՝ Պոնտոս և Եւքսինոս, հուն.՝ Πόντος Εὔξεινος (էջ 88)։

** Հրատ.՝ Տիւրոսի։

*** Հրատ. զԱսպզատիտէս ծովակ, Պատկ. հրատ.՝ զԱսփալդես ծովակ, հուն.՝ Ἀσφαλτῖτις λίμνη (էջ 88)։

**** Հրատ.՝ ընկերն։

ընդակն է պարզիչ ջուրց ծովու, զթեթեն և զնուրբսն և զքաղցունսն ձգէ առնու տապովն իւրով, և զթանձրունսն և զծանունսն, այսինքն զմրրեալն և զպղտորեալսն անդրէն թողու. և որ անդրէն մեկնեալ մնան, են աղիքն և դառինքն։ Եւ այսու ամենայնիւ գտանի ծով միակշիռ, զի մի՛ լնուցու ի գետոցն՝ որ մտանեն ի նա։ Եւ նոքա, որ դայս ասացին ի ծովէ, դարձեալ այլք անդստին ի նոցանէ դառնան ի վերայ նոցա, և այսպէս ասեն, թէ բնաւ ամենեին չէ արեգակն պակասեցուցիչ խոնաւութեան։... [79$_{35-37}$] Զիցէ՞ տեսեալ ձեր զկատսայս և զսանս լի ջրով եռացուցեալս ի հրատի, և միտ եդեալ՝ թէ զիա՛րդ լինիցի թերութիւն ջրոյն ի գոլոշւոյն որ ելանէ։ Զի թէ [80$_{1-13}$] յերկարեսցեն թողցեն ի բորբոքեալ հրատին, բնաւ ամենեին իսկ ունայն գտանին ամանք ի ջրոյ անտի և զջուրն զոր ուտէ հուրն՝ ի խոնարհ առաքէ գոլովն ի վեր։ Սոյնպէս ունիս նայել և ընդ ջուրս ծովու, որ վերանան ելանեն ի վեր տապովն արեգական։ Եւ ունիմ օրինակ ի նաւավարաց, որ թէ պակասիցի ջուր ի ծովու, առնուն զջուրս ծովուն զաղին և զդառն, արկանեն ի սանս կամ ի կատսայս, եռացուցանեն։ Եւ դնեն սպունկս մեծամեծս խուսին կատսայիցն, և ի խոնաւութենէ՝ զոր առնուն սպունկքն ի գոլոշւոյն, ջուրս քաղցունրս ժողովեն։ Եւ այսպիսի հնարիւք առնեն դարման կենաց իւրեանց ի նուազութենէ ջուրցն, յորժամ պակասիցէ ի ծովու։ [120$_{1-5}$]... քանզի և խոյն գլխաւոր է հօտին. և պարգևատու և շահաւոր, քանզի և խոյն առանց տրտմութեան մերկանայ յասրոյ անտի իւրմէ, և դարձեալ և անդստին յիւրմէ բնութենէ ըստ նմին նմանութեան զգենու հանդերձ հանապազորդ։ [119$_{34-47}$] Այս անուն, ասեն, գանգրահեր և ծաւի և փարփառ է ի ծնէ, ի խոյի յաստեղատանն կայր ժամ նորա. քանզի վասն այնր և դառն և ազի։ Իսկ փիլիսոփայքն բարիք այսպէս ասացին վասն միակշիռ կալոյ ծովու. թէ ջերմութիւն արեգականն ծծէ և քարշէ զքաղցունս և զնուրբսն և զթեթևսն գոլորշեաւն հանէ յօդն։ Եւ թանձունքն և ծանունքն անդէն մնան, այսինքն է մրրեալքն և պղտորեալքն։ Եւ որ անդէնն մնան, են աղիքն և դառինքն։ Եւ վասն այնր է ծով միակշիռ և ժահահոտ, զի գոլորշին որ ձգեցաւ ջերմութեամբն արեգական՝ պակասեցոյց զյաւելուածն և տարաւ [18$_{1-15}$] զքաղցրութիւնն։ Եւ օրինակ տան զսանս և զկաթսայս լի ջրով եռացուցեալս ի հրատի. և միտ դիր թէ զիարդ լինի թերութիւն ջուրցն գոլորշեաւն որ ելանէ ի նմանէ. զի թէ յերկար թողցես ի բորբոքեալ հրատին և ո՛չ յաւելցես ածել ի նա ջուր, ամենեին սպառի։ Նոյնպէս և ծով ասեն զուգեալ կայ յաւելլոյ գետոց և յուխից։ Եւ ի պակասելոյ գոլորշոյն զոր ձգէ արեգական տապովն իւրով՝ հանէ յօդն։ Ասեն օրինակ և ի նաւավարաց որոց պակասի ջուր ի ծովու, առնուն ատէ ջուր ծովուն զաղին և զդառն և արկանեն ի կաթսայ և եռացուցանեն ի հրատի, և դնեն սպունգս մեծամեծս խփունս կաթսայիցն. և ի խոնաւութենէն զոր առնուն սպունգքն ի գոլորշւոյն՝ ջուրս քաղցունս ժողովեն ի նոցանէ քամելով. և այսպիսի հնարիւք առնին դարմանք կենաց նոցա ի նեղութենէ ջուրցն նուազութեան յորժամ պակասիցի ի ծովու։

ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԱՅԻՆ ԶԱՐԴՈՒՑ

[20$_{12-22}$]...զի և խոյ գլուխ է հօտի և պարգևատու. զի առանց տրտմութեան մերկանայ յասուէն իւրմէ, և դարձեալ անդստին իւրմէ բնութենէն զգենու հանդերձ հանապազորդ։ Նոյնպէս և զաստեղատունն ասեն ըստ նորին նմանութեան։ Ասեն թե որ ի նմայն ծնանի գեղեցիկ լինի և փարփառ, գանգրահեր,

այնպէս է անասունն այն զուարթերես և մեծ։ Մեծ, ասեն, և ճոխ լինելոց է՝ որ յայսպիսի կերպարանս ծնանի։ [120_{5-8}]… Եւ դարձեալ ասեն, թէ որ յեզին աստեղատանն ծնանի, գործուն և հնազանդ լինելոց է, ըստ օրինակի եզին՝ որ միշտ ընդ լծով և հնազանդեալ կայ ի վար։ [117_{11-36}]… Բայց մեզ չէ ինչ դանդաղելի երկրորդել զանհամ պատմութիւնս նոցա. քանզի ի հաստատաբան ճշմարտութենէս մերմէ կշտամբեալ գտանին։ Եւ արդ դարձցուք զնոքիմք վերստին. և ահա կամիմ ասել՝ փբր ոչ զիմ ինչ բանս խառնել ի ներքս, այլ ի նոցունց բանիցն երկրորդեմ ընդդէմ նոցա, կշտամբել զնոսա անդստին յիւրեանց բանիցն. զի թերևս որք կանխաւն անկան յամբարշտութիւնս նոցա՝ բժշկութիւնս գտցեն, և որ չիցեն գայթակղեալ և անկեալ ի պատրանս նոցա՝ զգուշութիւն ստասցին, զի յայնպիսի բանս՝ որ նման նոցին իցեն՝ մի՛ յօժարեսցին անկանիլ։

Զի ահա տեսանեմք, զի և գտողաց զաստղագիտութիւն և մեկնչաց աստղագիտացն, ուստի զծնունդն բաշխեն, բազում իրք վրիպեն, յորժամ սկսանին համարել. այնպէս զի և ոչ ինքեանք իւրեանց արուեստին բաւական լինին հասանել։ Զի զչափ ժամուցն անհամար րոպէիւք ժամուցն համարեցան. քանզի ի պէսպէս մասունս կոտորեցին զրոպէսն, այս ինքն զթօթափել ական, ըստ այնմ՝ զոր Առաքելն ասէ՝ եթէ Յանկարծակի իբր զական թօթափելոյ. զի տեղի բազում ժամուց է ընդ ծնունդն և ընդ ժամս իւր։ Եւ որ ծնանի, ասեն, յայն միայն յընդաղօտ փ րոպէ ժամուն, ոմն ճոխ լինի, ասեն, և գլխաւոր քաղաքաց և մեծատուն և զօրաւոր. և մեւսն, ասեն, որ ծնանիցի ի միւսումն, և ի սակաւ ինչ փոխելոյ [118_{1-36}] յակնարկել ժամուն՝ տառապեալ և մուրող լինի, և այսպէս թափառական շրջի

ծաւի, զուարթատես, բարեբարոյ, մեծ և ճոխ լինի։ Զցլէն ասեն թէ՝ ըստ նմանութեան ցլու զօրաւոր և անձնեայ է, և որ ի նմայն ծնանի առաւել ուժեղ և մեծահասակ լինի, և հնազանդ և գործունեայ՝ ըստ նմանութեան եզին, որ միշտ ընդ լծով հնազանդեալ կայ ի գործ։ [24_{2-32}]… Բայց մեզ չէ ինչ դանդաղելի երկրորդել զանհամ պատմութիւնս նոցա. քանզի ի հաւաստաբան ճշմարտութենէս մերմէ կշտամբեալ գտանին։ Եւ արդ դարձցուք անդրէն զնոքիմբք վերստին։ Եւ ահա սկսանիմ ասել իբր ո՛չ եթէ զիմ բանս ինչ խառնեմ ի ներքս, այլ ի նոցուն բանից երկրորդեմ ընդդէմ նոցա կշտամբել զնոսա անդստին յիւրեանց բանիցն. զի թերևս որք կանխաւ անկան յամբարշտութիւնս նոցա՝ բժըշկութիւն գտցեն։ Եւ որ ո՛չ իցեն գայթակղեալ անկեալ ի պատրանս նոցա՝ զգուշութիւն ստասցին։ Զի յայնպիսի բանս և որ նման սոցին իցեն մի՛ յօժարեսցին անկանել։ Արդ՝ ահա տեսանեմք, զի և ի գիտողաց աստեղագիտութեան և ի մեկնչաց աստեղատանցն ուստի զծնունդն բաշխեն՝ բազում իրք վրիպեն յորժամ սկսանին համարել այնպէս։ Զի ո՛չ ինքեանք իւրեանց արուեստին բաւական են հասանել, զի զչափ ժամանակացն անհամար րոպէիւք ժամուցն համարեցան. քանզի այսպէս մասունս կոտորեցին զրոպէսն, այսինքն է զթօթափել ական, ըստ այնմ զոր Առաքեալ ասէ թէ յանկարծակի իբրև յական թօթափեալ. զի տեղի բազում ժամուց է ընդ ծնունդն և ընդ ժամս իւր, և որ ծնանի ի յայն ի մի ասեն ընդ աղօտ, որպէս ժամոյն ճոխ լինի ասեն՝ գլխաւոր քաղաքաց, մեծատուն և զօրաւոր։ Եւ* միւսն ասեն որ ծնանի, ի միւսում ի սակաւիկ ինչ փոխել ակնարկելով ժամուն՝ տառապեալ և մուրաւղ լինի, և այնպէս թափառական շրջի տուն ի տա-

* Հրատ.՝ են։

տուն ի տանէ և տեղի ի տեղւոջէ, և հաղիւ կարէ ժողովել զաւուրն զռոճիկն։

Եւ զբոլորակ պատկերաց աստեղատանցն յերկոտասան մասունս բաժանեն, քանզի ըստ թուոց երկոտասան ժամու աւուր՝ երեսուն աւուր կազմեալ է զբոլորակն. և արեգակն տարւոյ տարի գայ շուրջ զերկոտասան աստեղատամբքն բոլորակին։ Արդ երկոտասան մասն յերեսուն մասն բաժանի. և զմի մի յերեսուն մասանցն ի վաթսուն ժամս կոտորեն, և զմի մի ի վաթսուն ժամուցն ի վաթսուն վայրկենի հատանեն. և այսու անճառ ժամուք, անհամար և յանկարծածին բոպէիւք սահմանեցին զծնունդս այնոցիկ՝ որ ծնեալն լինին։

Արդ տեղեկացուք՝ եթէ կարիցե՞ն կալ ի վերայ արագախաղաց վայրկենաց ժամուց իւրեանց։ Ծնանի մանուկ դժուարին երկամբք մօրն՝ որ ծնանին, և կայ մանկաբարձն դեգերեալ, տեսանել՝ թէ արու իցէ մանուկն, եթէ էգ. կատարեալ կայ լսել զաղաղակ լալոյ մանկանն, զի այն է նշանակ կենաց նորա, և ի լալոյ անտի իմանայ՝ եթէ կենդանի իցէ որ ծնաւն։ Արդ զայնչափ ժամանակն քանի՞ արգեւք բոպէս համարիցիք անցանել ի մասանց բոպէից միոյ միոյ վաթսնիցն. զի մի ի վաթսուն մասանցն ունի վաթսնից վաթսուն բոպէ, այսինքն է ական թօթափել։ Եւ յետ այսչափ անցանել բոպէից՝ ասացաւ աստղագիտին յընտանեաց այնմ որ ծնաւն. արդ որչա՞փ ժամս վայրկենից և բոպէից համարիցի անցեալ աստղագէտն մինչ կայր ուշ ունէր մանկաբարձն լալոյ մանկանն։ Եւ դարձեալ եթէ այլ ուրն ևս դիպեսցի ժամաբաշխն և բոպէահամարն՝ արտաքոյ տանն, որ ծնաւ մանուկն, և ի նմին ժամաբաշխ բոպէահամար աստեղագիտին պարտ և պատշաճ է բազում փոյթ յանձին ունել՝ առ ի գիտել ճանաչել զժամ մանկանն՝ որ ծնաւն, եթէ ի գիշերի իցէ և եթէ ի տուէ։ Եւ թուի ինձ այլ այդ. բաղում

նէ և տեղի ի տեղւոջէ. և հազիւ կարէ ժողովել զաւուրն ռոճիկ։ Եւ զբոլորակ պատկերացն աստեղատանցն. ԲԺ. ան մասն բաժանեն, քանզի ըստ թուոյ, Լ աւուր կազմեալ է զբոլորակն. և արեգակն տարւոյ ի տարի յոր գայ ի շուրջ ը. ԲԺ. ան աստեղատամբքն բոլորակին։ Արդ զԲԺ-ան մասն յերեսուն մասն բաժանեն և զմի մի յ. Լ. մասանցն Կ մասն կոտորեն. և զմի մի ի Կ ժամուցն [25, -32]... յերեսուն վայրկենի հատանեն։ Եւ այսու անճառ ժամուք* անհամար և յանկարծածին բոպէիւք սահմանեցին զծնունդս այնոցիկ որ ծնեալն լինին։ Արդ՝ տեղեկացուք** եթէ կարիցեն կալ ի վերայ երագախաղաց վայրկենեաց ժամուցն իւրեանց. ծնանի մանուկն դժուարին երկամբք մօրն՝ որ*** ծնանին, և կամ մանկաբարձն դեգերեալ տեսանել, թէ արու իցէ մանուկն թէ էգ. և կատարեալ**** կայ լսել զբարբառ մանկանն՝ զի այն է նշանակ կենաց նորա, և ի լալոյ անտի իմանայ եթէ կենդանի իցէ որ ծնաւն։ Արդ՝ զայնչափ ժամս քանի՞ արդեօք բոպէս համարիցիք անցանել ի մասանց միոյ միոյ Կ իցն. զի մի մի ի Կ մասանցն, ունի—Կ իցս Կ բոպէ. այսինքն է ական թօթափեալ։ Եւ յետ այսչափ անցեալ բոպէից ասացաւ աստեղագիտին յընտանեաց այնր, որ ծնաւն։ Արդ որչափ ժամս վայրկենեաց և բոպէից համարիցի անցանել աստեղագէտն, մինչ կայր ուշ ունէր մանկաբարձն լալոյ մանկանն։ Դարձեալ այլուր ևս դիպիցի ժամաբաշխն և բոպէահամարն արտաքոյ տանն, ուր ծնաւ մանուկն, և նմին ժամաբաշխն բոպէահամար աստեղագիտին պարտ և պատշաճ էր բազում փոյթ յանձին ունել, առ ի գիտել ճանաչել զժամ մանկանն, որ ծնաւն թէ՞

* Հրատ.՝ անճամուքս փխ. անճառ ժամուքս։
** Հրատ.՝ աղէ տեսցուք։
*** Հրատ.՝ մօր նորա փխ. մօրն՝ որ,
**** Հրատ.՝ կտրել։

անգամ բազում ժամք [119₁-₃₃] անհամար բոպէիւք անցանեն, մինչև յայց ելեալ խնդրէ աստեղագէտն զտանել զժամ ծննդեանն մանկանն՝ թէ ո՛ր ժամ իցէ։ Եւ դարձեալ՝ թէ ո՛ր աստղ իցէ տուիչ ժամուն, և յորո՛ւմ մասանց յերկոտասանից աստեղատանցն երևեցաւ ժամն նորա, և յորո՛ւմ կարգի թուոց նոցա եկաց ժամն յիւրաքանչիւր վաթսուն վայրկենիցն, յորոց լինի ի վաթսընիցն վաթսուն բոպէիցն։ Եւ այս ամենայն, ասեն, նուրբք և առանց հատանելոյ գիւտք անհամար ժամուք յիւրաքանչիւր յաստեղատանցն, որ անուանեալ կոչին մոլորեցուցիչք, լինին, և ի սիրոյ և ի մերձաւորութենէ՝ զոր ունին ընդ աստեղսն մոլորեցուցիչս, որ անուանեալ կոչին աստեղատունք։ Եւ վասն այնորիկ է, ասեն, մերձենալն և պատահելն նոցա ի միմեանս, զի զծննդաբախտն ի ծննդոցն հաստատեսցեն։

Եւ մեծաւ փութովն զոր ունին յանձինս՝ վրիպեցուցեալ ի կորուստ մատնեն զժամս իւրեանց։ Քանզի ընդ վայրկեանս և ընդ բոպէս յաճախեալ բազմանան և ի վերայ նոցա փոփոխմունք ժամուցն և աստանդին. քանզի վրիպեալ զարտուղին խորհուրդք նոցա բազմութեամբ արագագնաց ժամօքն իւրեանց. զի երագութիւնն երագափոփոխ ակնարկութեանց նոցա ի յապուշ և յիմարութիւն կործանեաց զնոսա, և լինել այպն կատականաց դատարկացոյց մշտնջենաւորութիւն ի սնոտիսն։ Զի և ես զարմանամ, եթէ զիա՛րդ այնպէս դատարկացեալք ի գործոց՝ են միշտ զհետ սնոտեաց առանց ամօթոյ և պատկառութեան. և առաւել սքանչանամ ընդ այնս՝ որ հաւատան նոցա զկեանս իւրեանց, մեկնել զբարի կամ զբարեաց դէմս* նոցա. զի ցոփաբերանք և թանձրամիտք են, զի ոչ իմանան՝

* Հրատ.՝ զբաղտի կեանս փխ. զբարեաց դէմս։

ի գիշերի իցէ*, թէ ի տունջեան։ Եւ թուի ինձ, թէ այլ բազում ժամք անհամար բոպէիւք անցանեն, մինչ յայց ելեալ խնդրէ աստեղագէտն գտանել զժամ ծննդեան մանկանն, թէ ո՝ր ժամու իցէ. և դարձեալ թէ ո՞ր աստեղատանց է տուիչ ժամուն և յորո՞ւմ ի մասանց Բժ. ան աստեղատանցն երևեցաւ ժամն նորա, և յորո՞ւմ կարգի թուոցն նոցա եկաց ժամն առ ի ճանաչել։ Եւ ո՞ր իցէ երագընթաց ժամն առ ի յիւրաքանչիւր Կ վայրկենեացն, յորոց լինին Կ իցս Կ բոպէք. և այս ասեն նուրբ և առանց հասանելոյ գիւտք անհամար ժամուք ի յուրաքանչիւր աստեղացն որ անուանեալ կոչին մոլորեցուցիչք. լինին և ի սիրոյ և ի մերձաւորութենէ, զոր ունին ընդ աստեղսն չմոլորեցուցիչս, որ [26₁-₃₃] անուանեալ կոչին աստեղատունք. և վասն այսորիկ է ասել մերձենալն և պատահել նոցա առ միմեանս. և ծնընդարաշխն ծննդոցսն հաստատեսցեն, և մեծաւ փութով զոր ունին՝ յանձինս վրիպեցուցեալ ի կորուստ մատնեն զժամսն իւրեանց. քանզի ընդ վայրկենիս և ընդ բոպէս յաճախեալ բազմանան ի վերայ նոցա փոփոխմունք ժամուցն և աստանդին. քանզի վրիպեալ զարտուղին խորհուրդք նոցա բազմութեամբ երագախաղաց ժամունքն իւրեանց. զի երագութիւն երագափոխան ազդութեանց նոցա յապուշ և յիմարութիւն կործանեաց զնոսա, և լինելոյ յայպն կատականաց դատարկացոյց մշտնջենաւորութեան ի սնոտիս։ Եւ ես զարմանամ թե զիա՞րդ այնպէս դատարկացեալք ի գործոյ են միշտ զհետ սնոտեաց առանց ամօթոյ և պատկառութեան։ Եւ առաւել սքանչանամ ընդ այնս որ հաւատան նոցա զկեանս իւրեանց, մեկնել զբարի կամ զբարեաց դէմս նոցա։ Ցոփաբանք և թանձրասիրտք են, զի ո՛չ իմանան թէ զորո՛յ

* Հրատ.՝ ի գիշեր իցէ։

եթէ զորո՛յ զհետ երթան և ո՛ւմ հաւատան զանձինս իւրեանց, մեկնել՝ թէ զի՛նչ կեանք լինիցի նոցա յաշխարհիս... [121$_{19-22}$] Եւ ոչ մինչև ցայս վայր ձգեն զանհամ պատմութիւնսն, այլ մինչև ցայս՝ որ ամենեցուն յայտնի է, զի տեարք եմք մտաց և գործոց մերոց, և այսր ժպրհին լինել խափանիչք, յասելն՝ թէ բարիք և չարիք ոչ ի կամաց մարդկան լինին, և պատճառք նոցա յերկնից կախին. զի անտի, ասեն, լինին մարդիկ բարիք կամ չարք։ Դարձեալ և ընդդէմ այսց ասել՝ որ անչափ ծաղու արժանի են, գործք աւելի համարեալք, բայց քանզի բազումք ըմբռնեալք և կապեալ կան ի մոլորութեան նոցա, չէ պարտ և պատշաճ մեզ անփոյթ առնել և լռել։

Այլ նախ զայս հարցցուք, եթէ որպէս ասենն՝ հանապազ բիւրազգի կերպարանս փոխիցե՞ն աստեղք առ միմեանս. զի որ մոլորեցուցիչքն կոչին, հանապազորդ գնացս ունին, և կէսքն երագընթաց գնացիւքն հասանեն միմեանց, և կէսքն մեղմագնաց գնացիւքն յամեն և անագանեն. և ի միում յանկարծեբռեաց ժամու տեսանեն զմիմեանս, և դարձեալ՝ ասեն՝ ղօղեալ թաքչին ի միմեանց. և որպէս ասեն՝ զօրութիւն իմն մեծ ունին գնացք նոցա, և ծննդաբաշխ ծննդոց կազմեն։ Եւ է տեղի, ասեն, որ տեսանէ աստղ բարի զընկեր իւր, զծննդենէ բարեգործի յայտ առնեն. և ի միւսում տեղւոջ, ասեն, ուր դիպեսցի աստղ չար իւրում ընկերի, զծննդենէ չարագործի յայտ առնէ։ Եւ է, ասեն, մեւս ևս տեղի, եթէ դէպ լինիցի անդ երևիլ բարիոք աստղ, առնեն զերևել բարի աստեղն ծնունդ թշուառականի. և յորժամ ոչ կարեն հասու լինել ռոպէիցն ստայօդ ակնարկութեամբ իւրեանց, ածեն դիպեցուցանեն բարի աստղ ծննդեան թշուառականի։

[122$_{1-39}$] Եւ արդ զի՞նչ արարից, զի իբրու հարկ իմն համարիմ երկրորդել զհետ երթան՝ և ո՛ւմ հաւատան զանձինս իւրեանց մեկնել թէ զինչ կեանք լինիցի նոցա յաշխարհի։ Եւ ո՛չ մինչ ցայս վայր միայն ձգեն զանհամ պատմութիւնս, այլ մինչև ցա՛յս ևս որ ամենեցուն յայտնի է, զի տեարք եմք մտաց և գործոց մերոց, և այսմ ժպրհին լինել խափանիչք, յասելն թէ՝ բարիք և չարիք ո՛չ ի կամաց մարդոյն լինին, պատճառք նոցա զերկնից կախին, զի անտի ասեն լինել մարդիկ չարք և բարիք։ Դարձեալ և ընդդէմ այսց ասել որ այսչափ ծաղու աւելի են գործք արժանի համարեալք։ Բայց զի բազումք ըմբռնեալք և կապեալք կան ի մոլորութիւն նոցա, չէ՛ պարտ և պատշաճ անփոյթ առնել և լռել։ Այլ նախ քան զայս հարցցուք և որպէս հանապազ բիւր ազգի կերպարանս փոխիցեն աստեղքն առ միմեանս. զի յորս մոլորեցուցիչսն կոչէն՝ հանապազորդ գնացս ունին։ Եւ կէսքն արագընթաց գնացիւք հասանեն միմեանց։ Եւ կէսքն մեղմագնացիւքն յամեն և անագանեն, և ի միում յանկարծերևեաց* ժամու տեսանեն զմիմեանս, և դարձեալ ասեն [27$_{1-31}$] ղաւղեալ թաքչին ի միմեանց. և որպէս ասեն, զաւրութիւն իմն մեծ ունին և գնացք նոցա, և ծննդաբաշխս ծննդոցս կազմեն. և է տեղի ասեն որ տեսանէ աստղն բարի զընկեր իւր՝ զծննդենէ բարեգործի յայտ առնէ. և ի միւսում տեղի՝ ո՛չ ասէ ուր դիպեսցի աստղն չար իւրումն ընկերի զծննդենէ չարագործի յայտ առնէ։ Եւ է՛ ասեն միւս ևս տեղի, եթէ դէպ լիցի անդ երևեալ՝ բարիոք աստեղն առնեն զերևել բարի աստեղն ծնունդ թշուառականի. և յորժամ ո՛չ կարեն հասու լինել ռոպայից ստայօդ ակնարկութեանց իւրեանց, ածեն և դիպեցուցանեն զբարի աստեղն ծննդեան թշուառականին։

Եւ արդ զի՞նչ արարից, զի իբրև հարկ իմն համարիմ երկրորդել զանհամ

* Հրատ.՝ յանկարծ երևեաց։

զանհամ պատմութիւնս նոցա. քանզի որպէս վրիպեալք են ստայօդ ճառքն նոցա ի մտաց ճշմարտութեան, նոյնպէս անրաւ բազում են ամբարշտութիւնք նոցա։ Զի ոչ ածեն զմտաւ, թէ արդարև՝ որպէս ասեն՝ աստեղք իցեն պատճառք չարեաց, առ այն՝ որ արար զնոսա՝ ընթանան պատճառք չարութեան նոցա։ Քանզի եթէ ի բնէ չարք իցեն, յոյժ չար է և արարիչն՝ որ արար զնոսա. և եթէ արձակ կամս ունիցին լինել չարիք, եթէ այդ այդպէս իցէ, կենդանութեամբ ունին զշարժումն, և հանճար է ընտրողութեամբ ի գնացսն իւրեանց. ապա և նահանջել զգնացսն յանդուգն չարութեանցն իւրեանց կարողք են։ Եւ զայս ասեն զաստեղաց, և այսպիսի իրօք բամբասելն զանշունչսն և զանմռունչսն մոլորութիւն մեծ է։ Ո՞րչափ ինչ արգելք վրիպեալ գտան վարդապետք անհամ ուսմանն ստայօդ արուեստին. և զի բարիքն և չարիքն, ասեն, ոչ որպէս արժանի իցեն, որ առնուն զնոսա՝ բաշխին, այլ որպէս դիպեսցի աստղն՝ որ և իցէ ի տեղւոջն յորում և դիպիցի։ Բարեգործ լինելոց է, ասեն, որ ծնանելոցն է ի սակաւիկ ինչ բոպէիցն այնր ժամու. և քանզի ընդ այլ կողմ լինին հայեցուածք նորին աստեղն, չարագործ լինելոց է՝ ասեն՝ որ ծնանիցի ի փոխել ևս միւսոյ բոպէի. և դարձեալ եթէ սակաւիկ ինչ թիւրեսցէ նոյն աստղ զշարժումն և զդէմս իւր, փոխի՝ ասեն՝ չարագործաբաշխ բոպէն։

Արդ եթէ այսչափ անհամար բոպէիւք և անչափ վայրկենօք արագափոխ ժամուցն լինիցի փոփոխումն աստեղացն կերպարանաց ի բեւր ազգի գնացս և ի շրջանս, որչա՞փ արգելք թագաւորք ծնանին հանապազ ի փոփոխմանցն, որ լինին ըստ պէսպէս կերպարանաց աստեղացն։ Արդ ընդէ՞ր ոչ հանապազ ծնանիցին թագաւորք, և վասն է՞ր ի հարց առ որդիս կարգի գայ ժառանգութիւն թագաւորաց. քանզի ոչ

պատմութիւնս նոցա։ Քանզի որպէս վրիպեալ են ստայօդ ճառք նոցա ի մտաց ճշմարտութենէ, նոյնպէս անչափ բազում են ամբարշտութիւնք նոցա. զի ո՛չ ածեն զմտաւ իմանալ, թէ արդարև, որպէս ասեն, աստեղք իցեն պատճառք չարեաց՝ առ այն որ արարն զնոսա ընթանան պատճառք չարութեան նոցա. զի թէ ի բնէ չարք իցեն՝ յոյժ չար է արարիչն որ արարն զնոսա։ Եւ թէ արձակ կամս ունիցին լինել չարք, թէ այդպէս է, կենդանութեամբ ունին զշարժումն և հանճար ընտրողութեան ի գնացս իւրեանց. ապա և նահանջեն զգնացս յանդուգն չարութեան իւրեանց՝ կարող են և զայս ասել զաստեղաց, և այսպիսի իրօք բամբասել զանշունչսն։ Մորոսութիւն մեծ է որչափ ինչ արդեօք վրիպեալ գտան վարդապետք անհամ և անուսման ստայօդ արուեստին. զի բարիքն և չարիքն ասեն ո՛չ որպէս արժանի իցեն որ առնուն զնոսա բաշխին, այլ որպէս դիպեսցի աստղն որ և իցէ ի տեղւոջ՝ յորում և իցէ բարեգործ լինելոց է ասեն որ ծնանիցի ի սակաւիկ ինչ բոպէ այնր ժամու։ Եւ քանզի ընդ այլ կողմն լինին հայեցուածք նորին աստեղ, չարագործ լինելոց է ասեն որ ծնանիցի ի փոխել միւսոյ ևս [28₁₋₃₁] բոպէի. և դարձեալ թէ սակաւիկ ինչ թիւրեսցի նոյն աստղ, զշարժումն և զդէմս իւր փոխէ ասէ չարագործաբաշխն բոպէն։ Արդ եթէ այնչափ անհամար բոպէիւք և անչափ և վայրկենեօք արագափոխն ժամուց լինիցի ի փոփոխումն կերպարանաց աստեղացն ի բիւրազգի գնացս և ի շրջանս, ո՞րչափ արդեօք թագաւորք ծնանին հանապազ ի փոփոխմանցն որ լինին ստէպ ստէպ կերպարանաց աստեղացն, ընդէ՞ր ո՛չ հանապազ ծնանէին թագաւորք։ Եւ վասն է՞ր ի հարց առ որդիս ի կարգի գայ ժառանգութիւն թագին թագաւորաց,

ոք երբէք ի թագաւորաց պահեաց գտանել զժամս որդւոյ իւրոյ աստեղօքն՝ տեսանել թէ հասանիցէ նմա վիճակ թագաւորութեան, եթէ ոչ. և ոչ ի ծառայից ոք երբէք եղև տէր, թէ զայս այսպէս մեկնիցեմք։ [123₁-₂₆] Այլ աւասիկ տեսանեմք, զի Ողիա ծնաւ զՅովաթամ, և Յովաթամ՝ զԱքազ, և Աքազ զԵզեկիա։ Եւ զի՞րդ արգեալ ոչ ոք պատահեաց ժամանակ ծննդեան ծառայութեան միում ումեք յայսոց թագաւորաց, որ կարգ ըստ կարգի թագաւորեցին։

Եւ եթէ դարձեալ, որպէս և ասենն, չարեաց և բարեաց ոչ ի մէնջ է յօժարութիւնն և ոչ առ ի մէնջ լինի սկիզբն նոցա, այլ ծննդաբաշխ ծննդոցացն, ակամայ կամովք մերովք. թէ այդպէս իցէ, ապա աւելորդ են և օրէնսդիրքն*, որ դնեն սահման և պատուիրան զոր ինչ արժան է գործել և զոր ինչ ոչ։ Աւելորդ են դարձեալ և դատաւորք, որ պատուեն զբարեգործսն և առնեն պատիժ չարագործաց արդար դատաստանովք. քանզի ըստ բաշխիչն ծննդոցացն՝ ժպրհութիւն և չարութիւն գողոցն ոչ յիւրեանց կամաց է, և ոչ անօրէնութիւն սպանողին իւրով յօժարութեամբ. զի ոչ եթէ և կամէր արգելուլ զձեռս ի սպանանելոյ, կարէր ապրել ի չարիսն գործելոյ, զի բնութիւն ծննդեանն իւրոյ հարկ առնէր նմա գործել ի գործ սպանութեան։ Նաև մեծ վաստակն արուեստագիտաց ընդ ունայնս ցրէր, և վարն և աշխատութիւն մշակացն անօգուտ էր. զի իբրև ոչ կարկառեսցեն ըզձեռս ի գործ, գայցէ դարման կենաց իւրեանց առանց մուրակ շրջելոյ։ Եւ վաճառականի նոյն կամք էին, եթէ գայցեն դիպեսցին նմա շահքն բազում մեծութեանց, յորժամ խաղաղ նստիցի յաշխատութենէ ճանապարհաց, եթէ ի բաշ-

* Հրատ.՝ օրէնքն, Շիրակացու հրատ.՝ օրէնք, հուն.՝ οἱ νομοθέται (էջ 133)։

քանզի ո՞չ ոք երբէք ի թագաւորաց պահեաց զտանել զժամ որդւոյն իւրոյ աստեղօք՝ տեսանել թէ հասանիցէ՞ նմա թագաւորութեան վիճակ թէ ո՞չ։ Եւ ոչ ի ծառայից ոք երբէք եղև տէր. թէ զայս այսպէս տեսանիցեմք։ Այլ ահաւասիկ տեսանեմք՝ զի Ողիայ ծնաւ զՅովաթամ, և Յովաթամ՝ զԱքազ. և Աքազ ծնաւ զԵզեկիայ*: Եւ զի՞ արդեօք ո՞չ պատահեաց ժամ ծննդեան ծառայութեան միում ումեք այնց թագաւորաց՝ որ կարգ ըստ կարգէ թագաւորեցան։ Եւ թէ դարձեալ ասեն եթէ բարեաց և չարեաց ո՞չ ի մենջ իցէ յօժարութիւն, և ո՞չ առ ի մէնջ լինիցի սկիզբն նոցա. այլ ի ծննդաբաշխն ծննդոցացն ակամայ և ո՞չ կամօք մերովք. թէ այդպէս իցէ, ապա աւելորդ են օրէնսդիրքն, որ դնեն սահման և պատուիրան, զոր ինչ արժան է գործել և զոր ինչ ո՞չ։ Աւելորդ են դարձեալ և դատաւորք, որ պատուեն զբարեգործն, և առնեն զպատիժս չարագործացն արդար դատաստանօք, քանզի ըստ բաշխիչն ծննդոցացն** ժպրհութիւն և չարութիւն գողոյն իւրեանց կամացն, և ո՞չ անօրէնութիւն սպանողին իւրով յօժարութեամբն, զի ո՞չ թէև կամէր արգելուլ զձեռս իւր ի սպանելոյ (!), կարէր ապրել ի չարիսն գործելոյ. զի բնութիւն ծննդեանն իւրոյ հարկ առնէր նմա գալ ի գործ սպանութեան։ Նաև մեծ վաստակն արուեստագիտաց [29₁-₁₉] ընդ ունայնս ցրէր, և վարն*** և աշխատութիւն մշակացն անօգուտ էր, զի իբրու ոչ կարկառուցուն զձեռս իւրեանց ի գործ գայցէ դարման կենաց իւրեանց առանց մուրկան շրջելոյ. և վաճառականին այն կամք էին թէ գայցեն դիպիցեն նմա շահք բազումք մեծութեանց յորժամ խաղաղ նստիցի

* Հրատ.՝ Զեզեկիայ։

** Հրատ.՝ բախտից ծննդոցն։

*** Հրատ.՝ Նաև մեծավաստակն արուեստագիտաց ընդունայնասոյր է և վայր։

խիցն բախտի ժողովիցին նմա մեծութիւնքն ձրի։

Եւ եթէ ընդ արդարութեան՝ զոր գործէին* մարդիկ, ոչ լինէր նոցա պատիւ և պարգև, և ոչ պատիժ և դատապարտութիւն չարագործացն, ապա ի զուր և ընդունայն է յոյս քրիստոնէից. և առանց սանձաց նահանջելոյ ընթանային ամենեքին յամբարշտութիւն. զի ոչ դոյր վրէժխնդիր՝ որ խնդրէր զվրէժ չարեաց գործոց. քանզի ոչ մերովք կամօք լինէին, որպէս ասեն մոլորեալքն. և զոր ինչ ոք յիւր կամսն ոչ գործիցէ, [124₁-₇] զիա՞րդ ընդ այնր կրիցէ պատուհաս. և ուր հարկ և ծննդաբաշխ բախտն ունիցին իշխանութիւն, չիք տեղի վրէժխնդրութեան անօրէնութեան, թէ արժանի գործոց իւրեանց առնուցուն զհատուցումն չարագործք արդար դատաստանովք։ Շատ և բաւական լիցին մինչև ցայս վայր որք ասացան ընդդէմ ճըշմարտակորոյս վրիպելոցն... [135₂-₂₉] Ուսի՛ր ի քաղաքաց, որ ընդ ամենայն տիեզերս շինեալ են... միմեանց հեռացեալ. նայեա՛ց ընդ փողոցս նոցա, որ ողորդ ընդ արևելս նայեսցին։ Եւ զայս անչափ քաղաքս ակօսաձևս հրապարակօքն և փողոցօք՝ զիա՞րդ միանգամայն լուսաւորեցին... և միով կերպարանով տեսանիլ։ Զի լուսաւորէ զամենայն նրբափողոցս և զամարաստունս...

Եւ արդ ի տկարութենէ լուսոյ ճրագին ուսիր զմեծութիւն լուսոյ լուսնին. քանզի յոյժ տկար է լոյս ճրագին, այսպէս զի յորժամ գտանիցին բազումք ի միում տան՝ յորում լուսաւորիցէ, և ի միոյ ի նոցանէ՝ որում կայցէ ուղղորդ ընդդէմ ճրագին՝ անկանի ուղիղ ստուերն, և յայլոցն ստուերքն այսր անդր ձգին և խուսափեն. և այն ոչ միով կարպարանօք։ Եւ իբրու թէ չիք մեծութիւն նորա, վասն այնորիկ ոչ կարէ տալ յաշխատութենէ ճանապարհաց, եթէ ի բաշխից բախտից ժողովէն նմա մեծութիւնքն ձրի. և թէ ընդ արդարութեան զոր գործէին մարդիկ ո՛չ լինէր նոցա պատիւ և պարգև, և ո՛չ պատիժ և դատապարտութիւն չարագործացն. ապա իզուր և ընդունայն են յոյս քրիստոնէից, և առանց նահանջելոյ սանձաց* ընթանային ամենքեան յամբարշտութիւն, զի ո՛չ դոյր վրէժխնդիր, որ խնդրէր վրէժ չարեացն գործոց։ Քանզի ո՛չ մերով կամաւ լինին, որպէս ասեն մոլորեալքն. և զոր ինչ ո՛չ յիւր կամս ոք գործիցէ, զիա՞րդ կրիցէ ընդ այնր պատուհաս, և ուր հարկ և ծննդաբաշխ բախտն ունիցի իշխանութիւն, չի՛ք տեղի վրէժխնդրութեան անօրէնութեան թէ ըստ արժանի գործոց իւրոց առնուցու հատուցումն չարագործն արդար դատաստանօքն։ Շա՛տ բաւական լիցին մինչև ցայս վայր։ Զայս՝ Բասիլիոս։

ՅԱՂԱԳՍ ԼՈՒՍՆԻ

[41₆-₂₂]... Ուսիր ի քաղաքաց որ ընդ ամենայն տիեզերս շինեալ են ի միմեանց հեռիք, հայեաց ընդ հրապարակսն և ընդ փողոցսն՝ որ ուղղորդ ընդ արեւելս հայիցին, գիա՞րդ միանգամայն լուսաւորեսցին, և միով կերպարանօք տեսանես, զի լուսաւորէ զամենայն նուրբ փողոցս և զամրաստանս։... Եւ արդ՝ ի տկարութենէ ճրագի ուսիր զմեծութիւն լուսնի ի լուսոյն իւրմէ. քանզի յոյժ տկար է լոյսն որ տարածանի ի ճրագէ, այնպէս զի յորժամ գտանիցին բազումք ի միում տան, և մի ումն որ կացցէ ուղիղ ընդդէմ ճրագին և այլոց ստուերքն այսր անդր ձգին և խուսափեն, և այն ոչ միով կերպարանաւ, զի չիք մեծութիւն լուսոյ նորա, վասն այնորիկ ո՛չ կարէ տալ միակերպ ստուերս ամենեցուն, զի որ ի մօտոյ կայ՝ զնորայն մեծացուցանէ զստուեր,

* Հրատ.՝ փորձէին։

* Հրատ.՝ անձանց։

միակերպ զստուերն ամենեցուն. զի որ սօտ իցէ ի լոյսն՝ զնորա ստուերն մեծացուցանէ, և որ հեռագոյնն կայցէ՝ զնորայն փոքրկացուցանէ։ [115$_{29-35}$]... Զի յերեքօրեայ ժամանակի՝ յորժամ յստակ և պարզ և վճիտ երևեսցի, զյստակ պարզոյ յայտ առնէ. և յորժամ ի մահիկ եղջերսն զնշանակ կարմրութեան կամ զմթարութիւն ունիցի՝ մթութիւն, ջուրք բազումք յամպոց յերկիր առաքին, և հարաւ յորդաշունչ բռնութեամբ յօդս բարբառի։ [115$_{17-20}$]... Եւ յորժամ շուրջ բակ ունիցի լուսինն ամպոց, և ունիցի մռայլ զարեգակն ամպոց, ջուրք բազումք յօդոց յերկիր առաքին, կամ զարամուր փքոց և զդառնաշունչ բքոց ամբոխելոց յայտ առնեն։

[115$_{36-37}$] Եւ այսու ամենայնիւ յայտ է, թէ նշանք՝ որ ի լուսաւորացն երևին, ի շահ օգտութեան են աշխարհի։ [116$_{2-11}$]... Եւ զի նշանացն՝ որ են գուշակք՝ նաւավարն զգուշասցի, և մի՛ խառնեսցէ զնաւն ի ծովն. այլ անդրէն զետեղ առեալ պահեսցի ի նաւահանդստին, զի մի՛ պաշարեալ գացի ի մէջ ծովուն ի շնչել հողմոցն ամբոխելոց։ Եւ ճանապարհորդն զգուշասցի, զի մի՛ ելցէ ի տունէ երթալ աշխատել բքայոյզ և կամ յանձրևաց ժամանակի։ Սոյնպէս և մշակն զգուշասցի՝ յառաջագոյն սերմանել զսերմանիսն, և տնկել զտունկս ի պատշաճ ժամանակի։

[132$_{32-39}$] Ի փոփոխմունսն՝ որ լինին ի լուսնի, անասունք զլրութիւն առնուն, և տունկք օգնականութիւն գտանեն աճման սնդեան իւրեանց. քանզի ի մաշիլն այլազգի գտանին, և ընդ աճիլն այլազգ փոփոխին. զի յորժամ սկսանի մաշել՝ լուծութիւն և ունայնութիւն զտանի ի նոսա, և յորժամ աճել սկսանի՝ լրութիւն և պնդութիւն առաւելու ի նոսա։ Քանզի լուսինն ի ջերմութենէ և ի խոնաւութենէ ունի խառնուած. [133$_{3-37}$]... որ ընդ լուսով լուսնին ննջիցեն, առաւել խոնաւութիւն լինի և որ հեռագոյն՝ զնորայն փոքրացուցանէ։ [42$_{8-23}$]... Զի յերեքօրեայ ժամանակի յորժամ վճիտ երևեսցի՝ զյստակ պարզոց յայտ առնէ։ Եւ յորժամ ի մահիկեղջերն զնշան կարմրութեան կամ զմթարութեան ունիցի, ջուրք բազումք յամպոց յերկիր հեղուն, և հարաւ յորդաշունչ բռնութեամբ յօդս բարբառի։ Եւ յորժամ շուրջ բակ ունիցի լուսինն յամպոց, և ի նմին աւուր ունիցի* մռայլ զարեգակն յամպոց. ջուրք բազում յօդոց յերկիր առաքին, կամ զարամուր փքոց և զդառնաշունչ** հողմոց ամբոխելոց յայտ առնէ... Եւ այսու, ամենայնիւ յայտ է, թէ նշանք որ լինին ի լուսաւորացդ, ի շահ օգտութեան աշխարհի է։ Նաւավարն զգուշասցի և մի՛ խառնեսցէ զնաւն ի ծով, այլ անդէն զտեղի առեալ պահեսցէ ի նաւահանգստին, [43$_{1-23}$] զի մի՛ պաշարեալ գտցի ի մէջ ծովուն ի շնչել հողմոցն ամբոխելոց։ Եւ ճանապարհորդն զգուշասցի, զի մի՛ ելեալ ի տանէ երթալ աշխատել ի բքայոյզ և կամ յանձրևաց ժամանակի։ Սոյնպէս և մշակն յառաջագոյն խմասցի սերմանել և տնկել ի պատշաճ ժամանակի։ Զի ի փոփոխմունս որ լինին ի լուսնի, անասունք զլիութիւն առնուն. և տունկք օգնականութիւն գտանեն աճման սնդեան իւրեանց։ Զի մի՛ մաշելն լուծութիւն և ունայնութիւն գտանի ի նոսա. և յաճելն լիութիւն և պնդութիւն առաւելու ի նոսա։ Քանզի լուսին ի ջերմութենէ և ի խոնաւութենէ ունի խառնուած, և այս լիցի քեզ նշան, զի որք լուսնակի ննջեն, խոնաւութիւն լինի ի գլուխս նոցա, և զմիս դալար եթէ ի լուսնակի

* Հրատ.՝ ունի։
** Հրատ.՝ զդառնացուցիչ։

ցի ի գլուխս նոցա. և զմիս դալար յորժամ ի լոյս լուսնի ոք կախիցէ, վաղվաղակի հոտի և ապականի. և որոց ի ջուրս իցէ բնակութիւն, պակասութիւն և լիութիւն գտանի ի նոսա. և ի սիրտս ծովուց...

Եւ գնացք իմն են, ասեն, յաշխարհին եւրիպեցւոց յովկիանոս, որ երբեմն ցուցանեն զյաւելուածս լիութեան իւրեանց, և երբեմն զիջանէ ի լիութենէ անտի. և այն, ասեն, ըստ գնացից լուսնին փոփոխի... Ի սկիզբն ծննդեան լուսնին անշարժ կան, ասեն, գնացք խաղացիցն, և ըստ յաւելուլն և ըստ աճելն լուսնի՝ սկսանի զեռալ և շարժիլ... Եւ յայնմ ծովու՝ որ անուանեալն կոչի երեկորեայց*, նմանութիւն սրուակաց է՝ ասեն՝ ի միջի, իբրև եթէ ձգեն և ծծեն, կալ մնալ ի պակասութեան՝ ընդ պակասելն լուսնի, և իբրև թէ բղխելով բղխեն վերանալ ելանել փողելով** զջուրսն՝ զի ընդ լնուլ լուսնին յորդեսցին։ [131$_{21-32}$]... Այլ երբեմն կատարեալ լինի բոլորն, բոլորակաւ երևի լոյսն իւր, և երբեմն պակաս է և մաշեալ ի լուսոյն։ Զպակասութիւնն իւր նախ ցուցանէ լուսին ի վերայ միոյ միոյ կողմանց իւրոց. զի յորժամ աճէ մի կողմն, մեւս կողմն զնշանակ աղջամղջին ցուցանէ. դարձեալ և յորժամ սկսանիցի պակասիլ՝ մի կողմն ամփոփի ինքն յինքն, զի ծածկեսցի ի մի կողմն։ Եւ յորժամ սկսանիցի երևիլ յարևմտից, յարևելս կոյս ցուցանէ զհայեցուածն բոլորն բոլորակ. և յորժամ յարևելս սկսանիցի մաշիլ, յարևմուտս կոյս ցուցանէ զմահիկ եղջերսն։

[110$_{25-32}$] Արդ լոյսն առաջին՝ որ տուաւ լուսաւորել զերկիր, ցիր բնութիւն ունէր. և տարրն արեգականն վազմեցաւ լինել ամանն առաջին լուսոյն։ Զի զոր օրինակ այլ իմն հուրն է, և այլ կախեսցես, վաղվաղակի հոտի և ապականի։ Եւ ի ջրայինս պակասութիւն և լիութիւն գտանի. սապէս և ի սիրտս ծովուց*: Եւ գնացք իմն են ասեն յաշխարհին Եւրոպացւոց յՈվկիանոս, որ երբեմն ցուցանեն յաւելուած լիութեան, և երբեմն զիջանին ի լիութենէ անտի. և այս ասեն ըստ գնացից լուսնի փոփոխին։ Ի սկզբան ծննդեան լուսնի անշարժական ասեն գնացք խաղացիցն և ըստ աճելն լուսնի՝ սկսանին շարժել և զեռալ։ Եւ դարձեալ՝ յայնմ ծովու որ անուանեալ կոչի երեկորեայց. նմանութեան սրուակաց** է ասեն ի միջին. իբր թէ ձգեն և ծծեն, խոնարհին և պակասին ընդ պակասելն լուսնի. [44$_{1}$] և յորդաբուխ վերանան ընդ լնուլն լուսնի։ [45$_{15-26}$]...երբեմն կատարեալ լի՛ ի բոլորն բոլորակաւն երևի լոյս իւր, և երբեմն մաշեալ և պակասեալ ի լուսոյն զպակասութիւն իւր նախ ցուցանէ լուսին ի վերայ միոյ միոյ կողմանց իւրոց։ Զի յորժամ աճէ մի՛ կողմ, միւս կողմ (!) զնշանակ աղջամղջի ցուցանէ։ Եւ դարձեալ յորժամ սկսանի պակասել միւս կողմն, ամփոփի ինքն յինքն, զի ծածկեսցի ի միւս կողմն. և յորժամ սկսանի երևել յարևմտից յարևելս կոյս՝ ցուցանէ զհայեցուածս բոլորն բոլորակին։ Եւ յորժամ յարևելից սկսանի մաշիլ՝ յարևմուտս կոյս սկսանիցի ցուցանել զմահիկ եղջերսն***, և այնպէս լուսաւորի կողմ (!) գնդին լուսնի՝ որ ի յարեգականէ կուսէ լինի։

ՅԱՂԱԳՍ ԱՐԵԳԱԿԱՆ

[47$_{22-27}$]... Իսկ երից աւուրցն նախագունից լոյսն ցիր բնութիւն էր, և արեգակն ամանն եղև այնր լուսոյն, և ժո-

* Հրատ.՝ երեկորեանց, Շիրակացու հրատ.՝ Երեկորեայ։

** Հրատ.՝ փոքելով։

* Հրատ.՝ ծառոց։

** Հրատ.՝ որակաց, Պատկ. հրատ.՝ սրուակաց։

*** Հրատ.՝ զմահիկեղջերսն։

իմն ճրագն. զի մինն ունի յարարածոյ իւրում զզօրութիւն լուսոյն, և մեւսն յարդարեալ կազմի առ ի լուսաւորել. սոյնպէս յստակ և սուրբ անաղտ լուսոյն կազմեցան լինել ամանք լուսաւորքն՝ որ եղեն։ [114$_{35-36}$] Քանզի է ինչ՝ որ երևի յարեգակնէ. և տէր մեր յայտնեաց մեզ յասելն, թէ [115$_{1-16}$] Յորժամ տեսանիցէք զի գայ ամպ յարևմտից, և ասէք՝ թէ անձրև լինի, և լինի. և յորժամ հարաւ շնչիցէ, ասէք՝ եթէ խորշակ ընթանայ, և լինի այնպէս... Եւ ըստ նմին օրինակի այլ ևս բազում կարպարանօք և փորձիւք յայտ լինին։ Զի յորժամ ընդ ծագել արեգականն մթագոյն ելանիցէ, և արեան և կայծական նշանակ ունիցի ճառագայթիւք ըստ փոփոխմանց փստաշունչ օդոցն, և եթէ ի նմին կերպարանս կացցէ, օդն պղտորեալ և յուզեալ ոչ յստակեսցի, և գոյնն մթագոյն ոչ լրթասցի, և հողմք խստաշունչք ևս յաւելցին, և ամպն ևս քան զևս բազմասցի, զերկար խոնաւայուղից և զսաստիկ անձրևաց յայտ առնեն...

[124$_{14-37}$]... Մեկնութեան նշանացն եղև կատարումն առաջին բանիւքն. ասասցուք արդ վասն ժամանակացն՝ որ են փոփոխմունք օդոց և գնացք ժամուցն, և երևիլ սառնասառոյց սառնամանեաց ձմերայնոյ, և քաղցրախառն շնչել օդոյն գարնանոյ, և բոցախառն հրատք տապոյ ժամանակայ ամարայնոյ, և մեղմախառն ցրտութիւն ժամանակաց աշնայնոյ. և զի՝ այս ամենայն փոփոխմունք ժամանակաց աստիճանացս արդարագնացիւք լուսաւորացն շրջեալ անցանեն ի վերայ մեր կարգ ըստ կարգի յօրինեալ յարդարմամբք՝ ըստ ակնարկելոյ զօրութեան, որ պատշաճեաց զնոսա յիւրաքանչիւր կարգս և ի ժամանակս։ Զի ձմեռն այսպէս լինի,

ղովեաց և արկ աստուած ի դա զլոյսն զայն, զորմէ ասացի թէ ցիր բնութիւն էր. և ժողովեալ ունի զնա յինքեան արեգակն, որպէս ճրագ զհուր, զոր օրինակ այլ իմն հուրն է և այլ իմն ճրագն. զի մինն ունի յարարածի [48$_{1-3}$] իւրում զօրութիւն լուսոյ. և միւսն յարդարեալ կազմի առ ի լուսաւորել։ Սոյնպէս և լուսոյն առաջնոյ կազմեցան լինել ամանք լուսաւորքդ։

[50$_{15-25}$] Քանզի զմի ինչ իրս որ երևին յարեգականէ. և փրկիչն մեր յայտնեաց յաւետարանին՝ թէ յորժամ տեսանէք զի գայ ամպ յարևելից, ասէք թէ անձրև լինի. և լինի այնպէս։ Եւ յորժամ հարաւ շնչէ, ասէք թէ խորշակ ընթանայ, և լինի այնպէս։ Ըստ սմին օրինակի, այլ ևս բազում կերպարանօք փորձիւ յայտ լինի, զի յորժամ ընդ ծագել արեգական մթագոյն ելանիցէ՝ արեան և կայծական նշանակ ունիցին ճառագայթքն ըստ փոփոխման խստաշունչ օդոց. և եթէ ի նմին կերպարանս կացցէ և օդն պղտորեալ և յուզեալ ո՛չ յստակեսցի և գոյն մթագին ո՛չ լրթասցի, և հողմք ևս խստաշունչք յուզեսցին, և ամպն ևս քան զևս [51$_{1-25}$] յաւելեսցի, զերկար խոնաւայուղից և զսաստիկ անձրևաց յայտ առնէ։... Մեկնութիւն նշանաց եղև առաջին բանիւքդ։ Ասասցուք արդ՝ վասն ժամանակաց որ են փոփոխմունք օդոց և գնացք ժամու և երևել սառնամանեաց ձմերայնոյ, և քաղցրախառն շնչելոյ օդոյ գարնայնոյ, և բոցախառն հրատք տապոյն ժամանակաց ամարայնոյ, և մեղմախառն ցրտութեան ժամանակաց աշնանոյն։ Զի այս ամենայն փոփոխմունք ժամանակաց աստիճանաց արդար գնացիւք արեգականէն՝ շրջին անցանեն ի վերայ մեր կարգ ըստ կարգի, յօրինեալ յարդարմամբք՝ ըստ ակնարկելոյ զօրութեանն, որ պատշաճեաց զնոսա յիւրաքանչիւր կարգս և ի ժամանակս։ Զի

յորժամ հեռանայ մերժի իշանել արեգակն՝ ի հարաւ մշտնջենաւորէ զգնացս իւր, յայնժամ յաճախեալ բազմանայ աստ ի մերում կողմանս երկայնութիւն ստուերացն գիշերոյ, որ է խաւար։ Եւ յիջանել արեգականն ի հարաւակողմ կոյս՝ շնչեն ցրտաշունչ սառնամանիք ընդդէմ օդոյն՝ որ տարածեալ կայ զերկրաւ. և ի պատճառ շոգոյ խոնաւութեան, որ զարթնուն ի վերայ երկրի, առնին անձրեւայոյզք և թօնընկէցք և բալաձիգք և ձիւնաբերք։

Եւ դարձեալ յորժամ սկսանի արեգակն աստիճանել՝ և ելս առնել ի հարաւակողմն կողմանց գալ հասանել ի հասարակած հաստատութեան երկնից [125_{1-37}] զհաւասարութիւն տուընջեան և գիշերոյ կատարէ իւրով յօրինեալ գնացիւքն։ Եւ մեծասքանչ զարմանալեօք բաժանին կարգ ժամանակաց. և որչափ վերասցի ելցէ արեգակն փոփոխելով զգնացս իւր ի ծագելն յերկիր, և ի նոսին զետղ առեալ դադարեսցէ... Եւ այնպէս քաղցրախառն յօրինուածով յարդարի գարունն իւրով մեծագեղ վայելչութեամբն. զի ի նմա արձակեն արմատք զբոյսս, և մարգք զուարճանան, և ծաղիկք պայծառանան, և տունկք ցըցուին, և ծառք արձակեն զբողբոջս իւրեանց, և անասունք երկրի հանդերձ թռչնօք, և ծովային և ջրածնունդ զեռունք, գան ամենեքեան հասանեն ըստ իւրաքանչիւր ազգաց ի ծնունդ և ի սեր և ի սնունդ։

Եւ յետ այսորիկ դարձեալ սկսանի մօտել գալ արեգակն ի փոփոխմունս ամարայնւոյ. երևեցուցանէ զգնացս իւր ի կողմանս հիւսիսոյ, ձգել երկայնացուցանել զաւուրսն։ Եւ քանզի յամրագնաց ժամովք անցանէ զօդովք, յերկարաձիգն գնացիւք ջեռացուցանէ ի վերոյ զօդս, և ծծէ ի ներքոյ զխոնաւութիւն երկրի, առնի գործակից և վաստակակից սերմանեաց՝ պաշտել զպէտս նոցա. պնդէ և պարարէ, զի եկեսցեն

ձմեռն այսպէս լինի. յորժամ հեռանայ մերժի յիջանել արեգակն ի հարաւ, և անդէն մշտնջենաւորէ զգնացս իւր, յայնժամ յաճախեալ բազմանայ աստ ի մերում կողմանս երկայնութիւնք ստուերաց գիշերոյն որ է խաւար։ Եւ յիջանել արեգական ի հարաւակոյս կողմանս, շնչեն ցրտաշունչ սառնամանիք ընդդէմ օդոց, որ տարածեալ կայ առ երկրաւ. և ի պատճառոյ խոնաւութեանն, որ զարթնուն ի վերայ երկրի, առնին [52_{1-26}] անձրևայոյզք և թօնընկէցք և բալաձիգք և ձիւնաբերք։ Դարձեալ յորժամ սկսանի արեգակն աստիճանել ելանել ի հարաւակողմ կողմանց՝ գալ հասանել ի հասարակած երկնից, զհաւասարութիւն տունջեան և գիշերոյ կատարէ։ Մեծ սքանչելօք բաժանի կարգ ժամանակացն. որչափ վերասցի ելցէ արեգակն փոփոխելով զգնացս իւր ի ծագելն յերկիր, և ի նոսին զետեղ առեալ դադարեսցէ։ Եւ այսպէս քաղցրախառն խառնուածովք յարդարի գարունն իւրով մեծագեղ վայելչութեամբն. զի ի նմա արմատք արձակեն զբոյսս, մարգք զուարճանան, ծաղիկք պայծառանան, տունկք ցցուիցին, ծառք արձակեն զբողբոջսն, և անասունք հանդերձ թռչնօք և ծովային ջրածնունդ զեռնօք. և ամենեքեան ըստ իւրաքանչիւր ազգի գան ի ծնունդ, ի սէր և ի սնունդ։

Եւ յետ այսորիկ սկսանի մօտել գալ արեգակն ի փոփոխմունս ամարայնոյ. և երևեցուցանել զգնացս իւր ի կողմանս հիւսիսոյ, ձգել և երկայնացուցանել զտիւս. և քանզի յամբագնաց ժամօք անցանէ զօդովք, յերկարաձիգ գնացիւք ջեռուցանէ ի վերայ օդոյ. և ծծէ ի ներքոյ զխոնաւութիւն երկրի, և առնի գործակից և վաստակակից սերմանց ի պաշտել զպէտս նոցա պարարել պնդէ զի հասցեն ի չափ սննդեան իւրեանց.

հասցեն ի կատարեալ չափ իւրաքանչիւր սննդոց, նոյնպէս և զպտուղս ծառոցն ճեպէ աճեցուցանէ ի հասուցանել զպտուղս։ Եւ յորժամ զգենու արեգակն զկերպարանս բոցոյ հրոյ տարերց տապովք, սկսանին փոքրկանալ ստուերք տարերց երկրի և կարճել շուքն հասակաց* ի միջօրեայ ժամանակի... Եւ աւուրքն երկայն լինին, յորժամ ստուերք տարերցն կարճ լիցին. և յորժամ երկայն իցեն ստուերքն, աւուրքն փոքունք լինին։

Եւ աստ մեզ՝ որ ի կողմանս հիւսիսոյ բնակեալ եմք, այլ ազգ անկանին ի մէջ ստուերքն, և յայլում աշխարհի միոջ այլ ազգ։ Զի զերկուս աւուրսն յամենայն տարւոջ ի միջօրեայ ժամանակին առանց ստուերի [126₁-₃₆] լինին, քանզի կշիռ ի վերայ գլխոյ ամենեցունց է ճառագայթք արեգականն, և հասարակ ամենեցուն յամենայն կողմանց արկանէ զբոցաճաճանչ նշոյլս պայծառութեանն, մինչ զի և ի ներքին խորս ջրհորոցն ընդ նուրբ և նեղ բերանսն մտանէ և լուսաւորէ։ Եւ ոմանք այսպէս անուանեն զաւուրսն՝ անստուեր միջօրեայ։ Եւ այլք՝ որ ի հեռաւոր աշխարհի բնակեալ են, որ է անդր քան զերկիրն՝ ուստի գան խունկք անուշահոտութեան, և ստուերք հասակաց** մարդկանն յերկոցունց կողմանցն երևին։ Եւ այսպէս անուանեն զաւուրսն՝ երկըստուերեան աւուրք։ Եւ այս ամենայն ի փոփոխելոյ զգնացս իւր արեգական ի հիսիսի լինի։

Եւ իբրև հասուցանէ ի կատարեալ չափ սննդեանն զսերմանիս և զմիրգս, ապա սկսանի առ սակաւ սակաւ մեղմանալ ի բոցաճաճանչ տապոյն։ Սկսանի այնուհետև մերձենալ աշունն, ցուցանել ի նմա զմեղմախառն զգնացս իւր, և գայ հասանէ այնուհետև քաղցրախառն յօրինուածով՝ որ ունի զմիջնորդութիւն. և ըստ աստիճանելոյ սանոյնպես և զպտուղս ծառոց։ Եւ յորժամ ի վերին բարձանց ծագեսցէ արեգակն, փոքրկանան ստուերք տարերց երկրի, և կարճին շուքք հասակաց ի մէջօրեայ ժամանակի, տիւքն երկայնք լինին։ Եւ յորժամ ստուերքն երկայնին՝ աւուրքն փոքունք լինին, և աստ առ մեզ, որ ի կողմանս հիւսիսոյ բնակեալ եմք, [53₁-₂₅] այլազգ անկանին ի մէջն ստուերք. և յայլում աշխարհի միոջ այլազգ, զի Բ աւուրս յամենայն տարոջ ի մէջօրեայ ժամանակի առանց ստուերի լինի. քանզի կշիռ ի վերայ գլխոյ ամենեցուն կան ճառագայթք արեգականն, և հասարակ յամենայն կողմանց արկանէ զնշոյլս պայծառութեանն ի վերուստ մինչև ընդ ներքին խորս ջրհորոց ընդ նեղ և ընդ նուրբ բերանս մտանէ շող և լուսաւորէ. և անուանեն զաւուրսն անստուեր միջօրեայ։ Եւ այլք որ ի հեռաւոր աշխարհին Հնդկաց բնակեալ են, և անդր ևս քան զՍինդ և զՍմրղանդ ստուերք հասակաց մարդկան յերկոցունց կողմանց երևի. և կոչեն իսկ երկստուերեան աւուրս։ Եւ այս ամենայն ի փոփոխելոյ գնացից արեգական լինի։ Եւ իբրև հասուցանէ զսերմանս և զմիրգս ի կատարեալ չափսն, ապա սկսանի սակաւ սակաւ մեղմանալ ի բոցաճաճանչ տապոյն։

Սկսանի այնուհետև մերձենալ աշունն, ցուցանել նմա զմեղմախառն գնացս իւր, և գայ հասանէ քաղցրախառն խառնուածն, որ ունի զմիջնորդութիւն. և ըստ աստիճանելոյ սկսանի երևել նշանակ ցրտոյ կարգին մտանելոյ ի սառնամանիս ձմերայնոյ. ի շրջելոյն արեգական՝ որ իջանէ մեղմով ի կողմանց հիւսիսոյ, երթալ երևեցու-

* Հրատ.՝ շուքն հասարակաց։
** Հրատ.՝ ստուերք հասարակաց։

կաւերևեաց նշանակ ցրտոյ՝ կարգին մտանեն այնուհետև սառնասառոյց սառնամանիք ձմերայնոյ, ի շրջել արեգականն՝ որ իջանէ մեղմով ի կողմանց հիւսիսոյ երթալ երևեցուցանել զգնացս իւր ի կողմանս հարաւոյ։ Արդ այսպիսի փոփոխմամբք ժամանակաց և գնացիւք շրջանաժամուց վարի աշխարհս ակնարկելով արարչին։

«Եւ եղիցին, ասէ, յաւուրս»։ ...որպէս ուսուցանէ զմեզ Սաղմոսն վասն լուսաւորացն յասելն. թէ Արար զարեգակն իշխանական տուընչեան, և զլուսին և զաստեղս իշխանական գիշերոյ։ Արդ ի՞ւ ունի արեգակն [127_{1-30}] իշխանութիւն տուընչեան, եթէ ոչ զլոյս իւր ցուցանէ ի նմա գնացիւքն...։

Դարձեալ և ի տարիս եգան լինել արեգակն... ըստ օրինակի թուոցն երբայեցւոց... և ըստ օրինակացն Յունաց, որ ըստ թուոյ նախնեաց իւրեանց համարին զտարին արեգական ի հասանել ի կիտէն մինչև ի մեւս կէտն, նշանակել զընթացից շարժմանցն՝ զոր ունի արեգակն. նոյնպէս առնի նոքօք կատարումն տարւոյն իւրոյ։

«Եւ արար, ասէ, աստուած զլուսաւորս մեծամեծս»։ Եւ միտք բանին, որ ասէ՝ թէ մեծամեծս՝ այսպիսի իմն են. իբրու թէ ինչ մի միանձնութեամբ մեկնակի մեծ է, իւրով բնութեամբ ըստ միանձն մեծութեան երկնի և երկրի և ծովու. իսկ այլքն, որ կոչին ևս մեծամեծք, ըստ օրինակի բնութեանցս՝ որ զտանին առ մեզ են մեծամեծք քան զընկերս իւրաքանչիւր։ Որպէս զի մեծ իցէ ձի քան զձի և եզն քան զեզն, ոչ եթէ ըստ մեծութեան այլ ինչ տարեր, այլ ըստ համեմատութեան իւրոյ ընկերին ասի մեծութիւն նորա։ [128_{1-37}]... Եւ արդ ես զայս կարծեմ գնոցանէ, եթէ ոչ որպէս աստղ քան զաստղ մեծ է, այնպիսի իցէ և մեծութիւն լուսաւորացն, այլ այնպիսի իմն մեծատարած մեծութիւն ունին՝ որ բաւական են լուցանել զգնացս իւր ի կողմանս հարաւոյ։ Եւ այսպէս ի փոփոխել արեգական զգնացս իւր կատարէ ժամանակս յեղանակաց։ Եւ եղիցին յաւուրս՝ որպէս և Սաղմոսն վկայեաց՝ թէ իշխանական տուընչեան. և ի՞ւ իւիք իցէ իշխանական տուընչեան՝ եթէ ո՛չ գնացիւքն ցուցանել ի նմա զլոյս իւր... [54_{24-25}]... Դարձեալ և ի տարիս եդաւ լինել արեգական ըստ օրինակի թուոց յունաց որ յաւանդութենէ [55_{1-23}] հարցն իւրեանց համարին զտարի արեգական, ի հաստատեալ կիտէն մինչև ցմիւս կէտն նշանակել. և ըստ ընթացից շարժմանն զոր ունի արեգակն, նոյնպէս առնի կատարումն տարոյն իւրոյ։ Եւ արար, ասէ, աստուած լուսաւորս մեծամեծս, և զնովիմբ ածեալ՝ ասէ թե զլուսաւորն մեծ։ Միտք բանիցս այսպիսի իմն են, իբրու թէ՝ ինչ մի միանձնութեամբ մեկնակ մեծ է ըստ միանձնութեան երկնից, երկրի, և ծովու։ Իսկ այլքն ևս որ կոչին մեծք, ըստ օրինակի բնութեանցն, որ զտանին առ մեզ, ոմն մեծ քան զընկեր իւր, որպէս զի մեծ է ձի քան զձի, և եզն քան զեզն։ Ո՛չ եթէ ըստ մեծութեանն այլ ինչ տարր էր, այլ ըստ համեմատութեան իւրոյ ընկերին ասի մեծութիւն նոցա։

Արդ՝ ո՛չ այսպէս է մեծութիւն լուսաւորացդ, որպէս մեծ իցէ աստղ քան զաստղ. այլ այնպէս իմն մեծատարած մեծութիւն ունին որ բաւական են առհասարակ լուսաւորել զամենայն՝ ծագեալ ծաւալեալ համասփիւռ յերկինս յերկրի և ի ծովու. և շուրջանակի յամենայն ծագս երկրի։ Եւ քանզի զամենայն բոլորակն երկնից տարածի ունի լուսաւորդ ի ծագելն և ի մտանելն իւր. և զամենայն միջավայրս վայրեացն՝ իբրու զմի ինչ ունի միանգամայն զամե-

սաւորել առ հասարակ զամենայն լայնասփիւռ լուսաւորութեամբն, և ծագել ծաւալել միանգամայն ի վերայ ամենայն կողմանց, յերկինս և յերկրի և ի ծովու, և շուրջանակի յամենայն ծագս Երկրի։ Եւ քանզի զամենայն բոլորն բոլորակ երկնից տարածանին ունին լուսաւորքն ի ծագելն և ի մտանելն, և զամենայն վայրս միջավայրացն իբրև զմի ինչ ունին միանգամայն, վասն այնորիկ հասարակ ամենայն մարգկան միապէս միով կերպարանօք երևին։ ...Ինչ որ ի հեռաստանէ երևեսցի մեծ, թէպէտ և մեծ իցէ յիւրում տեղւոջ՝ մեզ իբրև զփոքր իմն թուի. և յորժամ սկսցուք մօտ երթալ ի նա, ապա տեսանեմք զմեծն՝ զի մեծ է և ոչ փոքր։ Իսկ առ արեգակն չիք ոք որ մօտ իցէ կամ հեռի, այլ միով հաւասարութեամբ միատարր ի վերայ ամենայնի մասանց աշխարհիս ցուցանէ զծագումն ճառագայթից իւրոց, և այս է օրինակ ճշմարիտ։ Զի որ բնակեալ իցեն անդ յաշխարհին Հնդկաց և կամ աստ ի Բիւրիտոնի աշխարհիս՝ միով հաւասարութեամբ միակշիռ տեսանեն զծագել արեգականն. զի ոչ յորժամ մտանէ առ արևմտեայս՝ նուազի ինչ ի մեծութենէն անտի առ արևելեայս, և ոչ յորժամ ծագէ առ բնակչաց արևելեայց՝ թերի ինչ և պակաս երևեսցի բնակչացն արևմտեայցն. և ոչ յորժամ գայ հասանէ ի հասարակած երկնից՝ փոխի ինչ ի կերպարանացն զոր ունէր։

Արդ մի՛ խաբեսցէ զքեզ սակաւատեսիլն նորա որ երևի, և մի՛ վասն զի չափ կանգնոյ միոյ երևի շուրջանակի շրջան նորա տեսողացն, կարծեսցուք՝ թէ [129₁-₈] այնչափ միայն իցէ։ Զի մեծամեծ իրք՝ որ ի բացուստ նկնատեսակ երևին, մեծայաղթ տարերքն նոցա իբրու սակաւիկ ինչ երևին տեսլեան ական. քանզի քայքայի սակաւ տեսիլ ական ի տկար զօրութենէ լուսոյն՝ զոր ունի, և չառնի բաւական ձգել հասուցանել զհանայն։ Վասն այսորիկ միապէս միով կերպարանօք երևի ամենայն մարգկան, որ բնակեալ են յամենայն ծագս երկրի։ Եւ գիտեա՛ թէ ամենայն մեծ իրք ի հեռաստանէ [56₁-₂₆] փոքունք երևին, և յորժամ երթաս մօտիս, ապա ստուգես՝ թէ մեծ է և ո՛չ փոքր։ Իսկ առ արեգակն չէ՛ ոք որ մօտ իցէ կամ հեռի. այլ միով հաւասարութեամբ ամենայն մասանց աշխարհիս տեսանի, և այս է օրինակ ճշմարիտ, զի որ բնակեալն իցէն անդր ի Հնդկաց աշխարհին, կամ անդր ի Բրիտանիայ աշխարհին, միով հաւասարութեամբ տեսանեն զծագելն և զմտանելն արեգականն, զի ո՛չ յորժամ գտանէ առ արևմտեայսն նուազի ինչ ի մեծութենէ անդի առ արևելեայսն. և ո՛չ յորժամ ծագէ առ ի բնակչացն արևելեայց թերի ինչ և պակաս երևեսցի բնակչացն արևմտեայց։ Եւ ո՛չ յորժամ գայ հասանէ ի հասարակած երկնից փոխի ինչ ի կերպարանացն զոր ունէր։ Արդ մի՛ խափեսցէ զքեզ սակաւ տեսիլ նորա՝ որ քան զչափ կանգնոյ միոյ երևի. և կարծիցես թէ այնչա՛փ իցէ։ Քանզի մեծամեծ ինչ իրք որ ի բացեայ ի հեռուստ նկնատեսակ էր*, իբր փոքունք երևին. վասն զի քայքայի սակաւ տեսիլն ականն ի տկար զօրութենէ լուսոյն զոր ունի. քանզի չինի բաւական ի հեռաձիգ վայրս հասուցանել զհայեցուածսն այլ ի տեսիլն։ Եւ զլոյսն իբրև զմռայլ տեսանես. և մեծ ինչ իրս որպէս զփոքունս։ Զիցէ՞ արդեօք տեսեալ քո ի գլխոյ բարձր լերանց գծով իւրով մեծանիստ լայնութեամբն, ո՞րչափ արդեօք փոքր երևեսցի քեզ մեծութիւն նորա։ Եւ կամ ո՞րչափ սակաւիկ տեսանիցես զմե-

* Հրատ.՝ տեսանէր փխ. նկնատեսակ էր։

յեցուածս իւր յերկայնաձիգ վայրսն՝ որ կան ի միջի. այլայլի պշրեալ տեսիլն, և զլոյսն իբրև զմռայլ իմն տեսանէ... [129₂₆-₃₆]... Եւ կամ չիցէ՞ տեսեալ ի գլխոյ բարձրացեալ լերինն զծով մեծ իւրով մեծանիստ լայնութեամբն... ո՞ր-չափ ինչ փոքր արգելք երևեսցին քեզ մեծութիւնք նորա. և կամ յո՞րչափ ա-կաւութիւն տեսանիցես զմեծութիւն նա-ւու, որ բարձեալ բերիցէ աղխաղխեալ օգերձեալ զբազմաշահ վաճառսն, հան-դերձ սպիտակ առագաստիւն՝ որոյ խորշ առեալ՝ գոգ գործեալ տանի զնա յար-շաւանի... այլ թերևս իբրև զձագ մի ազաւնոյ տեսանիցես զնաւն...

[129₂₀-₂₆] Չիցէ՞ արգելք տեսեալ քո ի բարձրաբերձ բարձրավանդակաց զդաշտ ընդարձակ և մեծանիստ, յորում վարիցին հարկիք եզանց ի բացավայրի ուրեք. զիա՞րդ արգելք թուեսցին քեզ հանդերձ եզնողաւն*, որ վարիցեն զնո-սա, այլ թերևս իբրև զմրջիւնս գետնա-գնացս, յոգոյ անտի՝ որ այլայլեաց զտեսիլ աչաց քոց։

[130₂-₃₇]... Որ ոչ ետ ճշգրտիւ նշմա-րել զտեսիլ իրացն լուսաւորաց. քանզի չառնի բաւական լոյս աչացն զհեռա-ւորսն իբրև զմօտաւորս տեսանել։ Չի զլերինս բարձունս և զմեծամեծս, որ զատեալ և մեկնեալ են ի միմեանց խո-րաձորովք, յորժամ հայեցեալ տեսա-նիցեմք ի հեռաստանէ, այնպէս տեսա-նիցեմք՝ եթէ շրջանս առեալ գայցեն շուրջ զմեզ. քանզի այլայլի տեսիլ ա-չացն երկնահայեաց տարածիւք, և վա-տէ զօրութիւն լուսոյն աչացն, և ոչ կա-րէ ճշգրտիւ նշմարել զխորաձորոցն անշրպետսն։ Եւ ոչ զկերպարանս և զնշմարանս տարերցն կարէ նկատել հաւաստեաւ ի հեռաստանէ. զի աշտա-րակքն չորեքկուսիք՝ բոլորակք երևին, և այնպէս թուին՝ թէ շուրջ գայցեն. և ծութիւն նաւու որ բարձեալ բերիցէ* աղխաղխեալ ուղերձեալ զբազմաշահն վաճառս՝ հանդերձ սպիտակ առագաս-տաւն, որոյ խորշ առեալ գոգ գոր-ծեալ** տանիցի զնաւն յարշաւանի, այլ թերևս իբրև [57₁-₂₉] զձագս ազաւ-նոյ տեսանիցես զնաւն։ Կամ չիցէ՞ տե-սեալ քո ի բարձրաբերձ բարձրաւանդա-կաց զդաշտ ընդարձակ և զմեծանիստ, յորում վարիցին հարկիք եզանց. զիա՞րդ թուիցի քեզ հանդերձ եզնողաւն իւրով, որ վարէ զնոսա. այլ թերևս որ-պէս զմրջիւնս գետնագնացս յայլայլե-լոյ օդոյն որ քայքայեաց զտեսիլ աչացդ քոց, որ ո՛չ ետ ճշգրտիւ նշմարել զտե-սիլ իրացն հեռաւորաց, քանզի չառնի բաւական լոյս աչացդ զհեռաւորն, որ-պէս զմաւտաւորս ճանաչել. զի և զլե-րինս բարձունս որ զատեալ լինին ի միմեանց խորաձորիւք, և յորժամ հա-յեցեալ տեսանիցեմք ի հեռաստանէ՝ ցածունք և միայարք երևին. և ո՛չ կա-րեմք նշմարել զխորաձորոցն անշրը-պետս. այլ և շարժունս նմանեցուցա-նեմք. և որպէս թէ շուրջ զմեօք երևես-ցին գալ։ Չի և աշտարակք չորեքկու-սիք բոլորք երևին, և այնպէս թուեսցին թէ շուրջ գայցեն։ Եւ մեծութիւնք ետե-ղակալ տարերց ի բացեայ շարժունք երևեսցին՝ և ո՛չ որպէս հաստատեալ կայ ի տեղւոջն նովին կերպարանօքն երևին ի հեռաստանէ։ Դարձեալ յայսմ յօրինակէ ի միտ առ զանբաւ մեծութիւն արեգականն. տես ո՞րչափ բազմութիւն աստեղաց են յերկինս, և ընդ ամենե-

* Հրատ.՝ եզնող ողանաւն, Շիրակացու հրատ.՝ զովողաւն, հուն.՝ οἱ ἀρότῆρες αὐτοί (էջ 140)։

* Հրատ.՝ բարձրաբերձ իցէ փխ. բարձեալ բերիցէ։

** Հրատ.՝ գոգեալ փխ. գոգ գործեալ։

մեծութիւնք ետեղակալք տարերց ի բացուստ իբրև շարժունք երևին, և ոչ որպէս հաստատեալ կան ի տեղւոջ նովին կերպարանօք երևին ի հեռաստանէ։... Եւ յայսմ օրինակէ յայտնի ի միտ առ՝ զի՛նչ չափ է մեծութեան նորա. տե՛ս ո՛րչափ բազմութիւն աստեղաց են յերկինս, և ընդ ամենեսեան ոչ են բաւական լուսաւորել զտխուր տրտմութիւն գիշերոյն, և արեգակն միայն միով անձամբ, յորժամ երևի և տարածեսցէ ի վերայ օդոյ զլոյսն, զամենայն սահմանս աշխարհիս միանգամայն լուսաւորէ...։ Նա և մինչ չև երևեալ և ընդ երկիր ծածկեալ իցէ քաղցրահայեաց ճառագայթիւքն, ցրուէ մաշէ զխաւարն, և հետակորոյս առնէ զաղջամուղջն, բառնայ զտխուրն տրտմութիւն, և ի տարածեալ մեծապայծառ լուսոյն ծածկէ զլուսաւորութիւն աստեղացն. և զթանձրամած օդոյն զստուերն մերկանայ յերեսաց երկրէ, և զխաւարն մթապատ հալածական ի տիեզերաց երկրէ։ Եւ ընդ նմին օդ քաղցրաշունչ [131₁-₈] շնչէ ընդ առաւօտս յաշխարհի, և ընդ արևածայրս լուսաւորին՝ արկանէ ցօղ մանրացօղ ի ժամանակս ամարայնոյ ընդ ամենայն երեսս երկրի։ Եւ ուստի՞ կարող է լուսաւորս այս զանչափ մեծութիւն երկրի միովն երևելով յանկարծածին ժամովն լուսաւորել, եթէ ոչ զի ի բարձրացեալ բարձանցն՝ որ ունի զմեծատարած բոլորն բոլորակ, զանչափ ճառագայթսն լուսոյ արձակէր։

սեան ո՛չ են բաւական լուսաւորել զմթութիւն գիշերոյն. և արեգակն միայն միով անձամբն յորժամ երևեսցի՝ զամենայն սահմանս աշխարհի միանգամայն լուսաւորէ։ Նաև մինչ չև ելեալն իսկ քաղցրահայեաց ճառագայթիւն ցրուէ մաշէ զխաւարն և հետակորոյս առնէ զաղջամուղջն, և բառնայ զտրխրութիւն. և ի տարածել մեծապայծառ լուսոյն՝ ծածկէ զլուսաւորութիւն աստեղացն, և զթանձրամած օդոց ստուերն մերկանայ յերկրէ։ Եւ ընդ նմին օդ քաղցրաշունչ շնչէ յաշխարհի, և ընդ արևածայրսն լուսաւորին, արկանէ ցօղ մանրացօղ ի ժամանակս [58₁-₅] ամարայնոյ ընդ ամենայն երեսս երկրի։ Եւ ուստի՞ կարէ լուսաւորս այս զանչափ մեծութիւն երկրի միովն երևելով յանկարծածին ժամու լուսաւորել, եթէ ո՛չ զի անչափ մեծութեամբն յանբաւ բարձրութենէ զանչափ ճառագայթս լուսոյ արձակէ։

«ШЕСТОДНЕВ» КЕСАРИЙСКОГО — ИСТОЧНИК КОСМОГРАФИЧЕСКИХ СОЧИНЕНИЙ ШИРАКАЦИ

К. М. МУРАДЯН

Резюме

В предлагаемой публикации представлены не все выявленные нами текстологические общности в сочинениях Василия Кесарийского и Анании Ширакаци. Эти отрывки существенны как для истории армянской книжности VII века, так и для рассмотрения разнородных источнико-

ведческих текстологических вопросов. Они выявляют первоисточник многих космографических сочинений Ширакаци, одновременно способствуя восстановлению первоначального вида трактатов ученого, исключив последующие интерполяции и текстологические искажения.

Разумеется, заимствованные у Кесарийского отрывки определяют как степень, так и характер влияния византийского автора на Ширакаци.

Армянский текст «Шестоднева» Кесарийского здесь представлен по изданию 1830 г., но с учетом разночтений рукописей, греческого оригинала и древнегрузинских переводов. Сочинения Ширакаци «О море», «О небесных светилах», «О луне» и «О солнце» приведены по изданию А. Абрамяна с учетом публикации К. Патканяна. В текстах отражены лишь опубликованные нами коррективы, поэтому в них немало слов и выражений, требующих исправления.

Данной публикацией еще раз подчеркивается необходимость источниковедческого исследования сочинений Кесарийского и Ширакаци.